# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ N 235-Ա

«18» մարտի 2025 թվականի քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի 8.8 կետի համաձայն և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանի հունվարի 30-ի թիվ 02.1//00856-2025 գրությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցութային հանձնաժողովի կազմում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչների, Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքում գործող գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչների՝ հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկելու և համակարգչային ծրագրում զետեղելու համար.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2025 թվականի ընթացքում անցկացվող մրցութային հանձնաժողովի կազմում Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներից մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկել և համակարգչային ծրագրում զետեղել հետևյալ թեկնածուներին՝

1) Արման Սարիբեկյան- Անի համայնքի ղեկավար

2) Էդգար Սաղաթելյան- Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

3) Ջորիկ Խաչատրյան - Անի համայնքի ղեկավարի տեղակալ

4)Գևորգ Շաբոյան - Անի համայնքի ղեկավարի խորհրդական

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի դպրոցների ներկայացուցիչներին հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկել և համակարգչային ծրագրում զետեղել հետևյալ թեկնածուներին՝

1) Ալիսա Մխիթարյան - Անի համայնքի Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
2) Կարինե Սահակյան – Անի համայնքի Ձորակապ բնակավայրի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
3) Նունե Այվազյան - Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
4) Ծովիկ Հովհաննիսյան- Անի համայնքի Լանջիկ բնակավայրի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներ հանդիսացող հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկել և համակարգչային ծրագրում զետեղել հետևյալ թեկնածուներին՝

1) Արամ Անտոնյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

2) Վանիկ Մարտիրոսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական

3) Սարգիս Մեքինյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական

4) Շանթ Շաքարյանց – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության ավագ մասնագետ

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամներին հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակում ընդգրկել և համակարգչային ծրագրում զետեղել նրանց անուն ազգանունները:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**

**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«18» մարտի 2025 թվականի

քաղաք Մարալիկ